



http://www.henaran.am/full_news.php?c=5&i=834

Մեջք մեջքի՝ հայ եւ հրեա կանայք



Նարեկացի արվեստի միությունում բացվեց ամերիկաբնակ հրեուհի Սյուզան Դեսսելի անհատական ցուցահանդեսը: Ներկայացված էին կավից քանդակված 365 նույնանման ֆիգուրներ, որոնք քանդակագործն արել է Հայաստանում, մեկուկես ամսվա ընթացքում:

Փոքրիկ քանդակները մեջք մեջքի տված հայ եւ հրեա կանաց կերպարներն են, որոնց մի կողմին պատկերված է հայկական խաչքար, մյուսին՝ Դավթի հրեական վեցթեյա աստղը: Այդպիսով Դեսսելը ցանկանում է վկայակոչել տարբեր ազգությամբ մարդկանց միջեւ համագործակցության դրական տարրերը:

Սյուզան Դեսսելը որոշել է նման քանդակներ անել Վայոց Ձորի մարզի Եղեգիս գյուղի հրեական միջնադարյան գերեզմանոցում թաղված կանանց հիշատակին: 13-14-րդ դարերում հրեա կանայք հարկադրված են եղել իրենց երեխաներին կրծքով կերակրել առնվազն 24 ամիս: Այդ ժամանակներում մանկական մահացությունը սովորական բան է եղել: Իսկ 2 տարի մանկանը կերակրելը երաշխավորվել է, որ իբր երեխան ողջ կմնա:

Ի դեպ, Եղեգիսի Օրբելյան ընտանիքի գերեզմանատան ուսումնասիրություններից պարզվել է, որ հայ ազնվականների տապանաքարերն իրենց ձեռով, մշակմամբ եւ նախշազարդմամբ շատ նման են հրեական տապանաքարերին. ակնհայտ է հրեական կրոնական եւ մշակութային ավանդույթների եւ տեղական մշակութի գուգորդումը: